



ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն



«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ



Գերմանական տեխնիկական համագործակցության ընկերություն

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի շարունակական զարգացումը և իրականացվող բարեփոխումների ու քաղաքականությունների հաջողությունը մեծապես պայմանավորված են երկրում որակյալ մասնագետների առկայությամբ: Այսօր որակյալ կադրերի մեծ կարիք կա տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում, թե՛ պետական և թե՛ մասնավոր հատվածներում:

Հաշվի առնելով նշվածը՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը նախաձեռնել է մի ողջ գործընթաց, որի ընթացիկ փուլի շրջանակներում նախատեսվում է ձևավորել աշխատասեր, կարող և զարգացած երիտասարդների թիմ, որոնք հետագայում հնարավորություն կունենան մասնակցել տարբեր պետական և մասնավոր ծրագրերում: Նախաձեռնությունը բացառիկ հնարավորություն է տաղանդավոր և ընդունակ երիտասարդների համար՝ բացահայտել իրենց հնարավորությունները, զարգացնել դրանք, սկիզբ դնել իրենց կարիերային:

Ծրագրին մասնակցության համար կարող են դիմել միայն տնտեսագիտական մասնագիտությամբ բակալավրիատի 4-րդ կուրսի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողները, ինչպես նաև ուսումն ավարտած մինչև 25 տարեկան երիտասարդ տնտեսագետները:

Մասնակիցները կընտրվեն մրցութային կարգով, որի սկզբնական փուլի համար չափանիշներ կհանդիսանան տրամաբանական սուր կարողությունները և անգլերենի բազային իմացությունը: Ընտրված երիտասարդները կանցնեն տեսական և գործնական վերապատրաստման և արդյունքների պարբերական թեստավորման գործընթացներ:

Ծրագրին մասնակցելու համար հարկավոր է դիմել Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC): Գրանցման **վերջնաժամկետն ապրիլի 19, ժամը 17:00** է, որից ուշ բոլոր զարգերը և/կամ էլեկտրոնային նամակներն այլևս չեն ընդունվի:

Լրացուցիչ մանրամասների համար խնդրում ենք այցելել www.edrc.am վեբկայք:

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
Հասցե՝ Երևան 0033, Բ. Հակոբյան 3 (Մերգեյյան ինստիտուտ), մասնաշենք 4
Հեռ./ֆաքս՝ (+374 10) 54-02-89, 27-69-54
Էլ. փոստ՝ info@edrc.am
Վեբկայք՝ www.edrc.am